

ՅՈՒՆԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՕՐԵՐ

Ուրբաթ 22 Հոկտ. 99

Լոմոնոսի Հիդրո Օդակայանէն գիշերուան ժամը 9.30ին ճամբայ կ'ելլեմ դէպի Երեւան, ընկերակցութեամբ Բրիտանահայոց Առաջնորդ Բարձր. Տ. Նիդշէ Ս. Արք. Կիզիբեանի, որպէս պատգամաւոր մասնակցելու Ս. Էջմիածինի մէջ կայանալիք Ազգային-Եկեղեցական ժողովին: Օդանաւին մէջ մեզի կը միանան ԱՄՆ-ի Ուսղըրէն՝ Արթ. Տ. Տանատ Ա. Քհնյ. Դաւթեան, Արժանթինահայեր՝ Գէորգ Գարամանուկեան եւ Աւետիս Սահակեան եւ ուրիշ պատգամաւորներ:

Կը նստիմ Սրբազանին եւ Տէր Հօր միջեւ եւ շատ ապահով կը զգամ. եթէ ճամբան րան պատահի՝ վստահ եմ որ իրենց աղօթքներու թեւերուն վրայ՝ հոգիս ալ երկինք պիտի բարձրանայ: Սրբազանը եւ Տէր Հայրը, Ամերիկահայ կեանքի մասին կը գրուցեն եւ հին յուշեր կը փոխանակեն: Տէր Հայրը, հարուստ կենսափորձով՝ հետաքրքրական եւ հաճելի խօսակից մըն է, որուն հետ մեր ազգային մտահոգութիւնները կը րածենք, կ'անդրադառնանք մեր Մայր Եկեղեցւոյ ներկայ վիճակին եւ յոյսը կը յայտնենք, որ ժողովին պիտի ստեղծուի կարելիութիւնը, խորհրդակցելու կարգ մը անհրաժեշտ բարեկարգութիւններու մասին: Կէս գիշերը անց՝ Սրբազանը եւ Տէր Հայրը անզգալարար կը սկսին մրափել, իսկ ես՝ կը յանձնուիմ 1970ին մեր Հայրենիքին առաջին այցիս յիշատակներու յորձանգիսն ու կը մտածեմ, թէ ինչ վիճակի մէջ պիտի գտնեմ Երեւանը եւ հին ապրող ազգակիցներս:

Օդանաւը անգլիական ժամով 2.40ին (տեղական ժամ 6.40) կ'իջնէ

Թիֆլիսի օդակայանը. ճամբորդներ վար կ'իջնեն: Երեւ Բառորդ ժամուայ դադար մը կը տրուի: Հիւսիսային եւ հարաւային Ամերիկաներու պատգամաւորներ, օդանաւին կեդրոնը, ոտքի վրայ, աշխուժօրէն ժողով կը գումարեն կաթողիկոսական հաւանական թեկնածուներու մասին: Հայերս որքա՛ն կը սիրենք ժողով ընել: Օդանաւի անձնակազմը կը փոխուի եւ 05 վայրկեանէն Երեւանի Զուարթնոց օդակայանը կը հասնինք աղջամուղջին:

Շաբաթ 23 Հոկտ. 99

Երիտասարդ Տէր Հայր մը պատգամաւորներս կը դիմաւորէ ու մեզ կ'առաջնորդէ VIP հիւրերու սրահը: Սրբազանը ինքնաշարժով Ս. Էջմիածին կը փոխադրուի, իսկ ես Պր. Ա. Յակոբեանի ընկերակցութեամբ կը հասնիմ Երեւան եւ կը տեղաւորուիմ Արմենիա 2 հիւրանոցը: Հակառակ անձուն մնացած ըլլալուս՝ դուրս կը նետուիմ՝ Երեւանը տեսնելու եւ օդը ծծելու: Հագիւ անկիւն մը դարձած, կը հանդիպիմ միակնի, կորաբամակ, ծալլապատիկ նստած ծերունիի մը, որ պնակ մը արեւածաղիկի կուտ կը ծախէ, աղաչելով որ օգնենք իրեն, օրերէ ի վեր անօթի է: Թշուառութեան այս տեսարանը կը ցնցէ եւ կը յուզէ զիս: Երեւանի մէջ կեցութեանս օրերուն, ամէն առտու, այդ ծերունին, իր անկիւնին մէջ, ա՛յդ դիրքին վրայ կը տեսնեմ: Քանի մը քայլ անդին՝ տարեց կին մը, բուրդէ հիւսուած պայուսակ մը ուսէն կախ՝ ձեռքը կ'երկարէ եւ ողորմութիւն կ'ուզէ: Կեանքիս մէջ, առաջին անգամ ըլլալով հայ մուրացիկի կը հանդիպիմ:

Քսան քայլ մը եւս, եւ աչքիս

առջեւ կը պարզուի կարօտցած հրապարակս, շրջապատուած նախարարական շէնքերով, պատկերասրահով, պատմական թանգարանով, նամականուանով, հեռագրատունով, գրավաճառատներով: Կը պակսին լեկինի արձանը իր պատուանդանով: Լայն տարածութիւնը մկրտուած է «Հանրապետութեան Հրապարակ» նոր անունով: Հայկական ռոնով այս պատկանելի վարդազոյն տուֆի գեղեցկութիւններուն առջեւէն հիացումով շրջապայելով, ցայտաղբիւրին եզրէն կ'անցնիմ Արովեան փողոց, բարեւ տալու երեսան հիւրանոցին, ուր տարիներ առաջ, ամիս մը մնացած եմ՝ Սփիւռֆի հետ Մշակութային Կայսի Կոմիտէի հրաւերով:

Անյայտացել է պանդոկը: Կը տեսնեմ Բովի Մոսկուա Սինեմայի սրահը որ ռուսական թատրոնի վերածուել է: Կը հարցնեմ հայրենակիցի մը.- ի՞նչ է պատահել երեսան հիւրանոցին. «Այդ ծածկուած շէնքն է: Իտալական մի ընկերութիւն գնեց: Արտաքին մասը պիտի նորոգեն եւ եղածի պէս պահեն ինչպէս որ է: Ներսը փոփոխութիւնների պիտի ենթարկեն եւ վերածեն հիւրանոցի»:

Եւ երբ իրարու կը ծանօթանանք, կը սկսի մէկը այն սրտքաց, յուզիչ խօսակցութիւններէն, որ աշխարհի հեռաւոր անկիւնէն եկած հայ մը, հարազատի զգացումով կ'ունենայ իր հայրենակիցին հետ՝ չաղաքամայր երեսանի մէջ, եւ կը պատմէ իր կեանքին պատմութիւնը: Արամ Լալայեան, մասնագէտ մեքենագործ մըն է, որ մեր հայրենիքի տնտեսական ներկայ անկապտ պայմաններուն բերումով՝ գործազուրկ է, եւ տեղ մը՝ աշխատաւորներու վրայ վերահսկիչ նշանակուած է ջնջին աշխատավարձով: Իր տիկինը բժշկուհի է եւ ան ալ անբաւարար թոշակ մը կը ստանայ: Համալսարանական ճարտարագէտ գաւակ մը ունի որ անգործ է: Ծնողքը շատ կ'ուզեն ամուսնացնել զայն, բայց

դժբախտաբար, չի կրնար ընտանիք պահել: Շատ ուշիմ, համալսարանական աղջնակ մը ունին որ ռուսագիտութեան ճիւղը աւարտած է գերագնացիկ աստիճանով: Ան ալ անգործ է եւ կրնայ լաւ ապագայ մը ունենայ դիւանագիտական ասպարէզին մէջ, եթէ առիթը տրուի: Ինքնաշարժ մը ունի իր մօրմէն իրեն տրուած: Իր հայրը գոհուած է Հայրենական Պատերազմի ընթացքին եւ հին ռեժիմին տակ, իր այրին, իրաւունք ունէր ինքնաշարժ մը ունենալու: Իր քակարանին մօտ, դրացի մը լաւաշ կը շինէ եւ ինք ալ լաւաշի փաթոյթները ճաշարաններու կը ցրուէ իր ինքնաշարժով, եւ ամէն ծախուած փաթոյթի վրայ 25 դրամ կը շահի: Զայրոյթէ, ընդվզումէ, դառնութենէ աւելի հիասթափութիւն, յուսախաբութիւն եւ տխրութիւն կը ծորի իր բառերին. «Ինչ արժի մեր ազատութիւնը երբ թշուառութեան մէջ ենք ապրում: Նախկին իշխանութեան օրօք դրամ ունէինք, բայց ապրանք չկար, հիմա էլ չիք ապրանք կայ, բայց դրամ չունենք: Անգործութիւնը մեզ փչացնում է:»

Կը փորձեմ միթաբաշ, իր սիրտը առնել, «Վստահ եմ որ աւելի լաւ օրեր պիտի գան. կը յուսամ աւելի շուտ՝ քան ուշ»: Տխուր ժպիտ մը կ'ուրուագծուի դէմքին վրայ: Արամ Լալայեանի ուզածը, ընդհանուր բոլոր հայերու նման, արդար քրտինքով շահուած, մարդավայել կեանքի ապահովութիւնն է եւ խոստմնալից ապագայ մը իր գաւակներուն: Արովեանն ի վեր ճամբուս վրայ, կը հանդիպիմ ծառի մը շուֆին տակը կեցած կամ ցանկապատի մը վրայ նստած խումբ խումբ երիտասարդներու որոնք կը ծխեն եւ անցորդները կը դիտեն: Անգործներ են՝ անյոյս:

Հիւրանոց կը վերադառնամ քիչ մը հանգչելու: Մտադիր եմ, մօտակայ Յակոբ Պարոնեանի անուան երաժշտական թատրոնը երթալու: Զար քաղդէս՝

թատրոնը փակ է այս գիշեր: Բարապան մը կը թելադրէ Տրամաթիֆական թատրոնը երթալ ուր Նազովրեցի Յիսուսի կեանքը կը բեմադրեն: Դարձեալ կը քալեմ Արովեանն ի վեր: Ուղեկիցի մը Տրամաթիֆական ուղղութիւնը կը հարցնեմ: Հարցումս ուղղեր եմ Երեւանի Քաղաքապետարանի գլխաւոր շինարար-նարտարագէտ՝ Սերգեյ Ջավադեանին: Կը ծանօթացուիմ: Անմիջապէս համակրանք կը զգամ այս յուրը, բարեկիրթ ազգակցիս հանդէպ: Սիրով յանձն կ'առնէ գիս Տրամաթիֆական թատրոնը հասցնել, բայց, կ'առաջարկէ նախ Vernisage այցելել: Ասկա ալ գի մըն է Օփերայի շէնքին դիմաց, որուն կեդրոնը կը տիրապետէ անմահն Մարտիրոս Սարեանի գանգուածեղ սպիտակ արձանը: 1970ին ողջ էր մեծ գեղանկարիչը, եւ սփիւռֆահայ ուսուցիչներս, իր տուն թանգարանը գացիմք զինք եւ իր գործերը տեսնելու: Այնքան յուզիչ էր պահը մեր հանդիպումին, որ ականայ իր ձեռքը համրութեցի. կատակեց ըսելով. «Ի՞նչ է զիս տէր տէր կարծեցիք որ եկեր ձեռքս կը համրութեմ»: Ըսի՝ վարպետ, ես կը համրութեմ այդքան գեղեցկութիւն ստեղծած քո ձեռքերը»: Ամէն շաբաթ եւ Կիրակի օրեր, նկարիչներ իրենց գործերը կը ցուցադրեն հոն. դասական, տպաւորապաշտ, վերացապաշտ, ապագայապաշտ դպրոցի, մութ գոյն, գուարթ գոյն ստեղծագործութիւններ իրարու ղու շարուած են իրենց ինքնուրոյն անհատական ռենքով: Անկիւն մը, մէկ շարքի վրայ շարուած են դասական ռնով բնանկարներ, ծաղիկներ, պտուղներ եւ նաեւ վերացապաշտ (abstract) նկարներ: Կարծէք նկարիչը ըսել կ'ուզէ: - Ես արհեստավարժ վարպետ նկարիչ եմ եւ կրնամ բնութիւնը ներկայացնել այնպէս ինչպէս որ է. բայց կը նախընտրեմ վերացական ձեւով արտայայտուիլ:

Կը հիանամ մեր հայրենի արուեստագէտներուն վրայ, որոնք նւթական այս դժնդակ պայմաններուն տակ իսկ աննուաճ կամքով կը շարունակեն գեղեցկութիւններ ստեղծել՝ հաւատարիմ մնալով իրենց կոչումին:

Կը նստիմք այգիին բացօթեայ սրճարանը եւ գաւաթ մը սուրճ կը խմենք եւ իրարմէ տարիներով «մրկաւ գատուած» ու իրար գտած մտերիմներու պէս կը բացուիմք իրարու: Հայրենակիցիս կեանքի ընկերն է՝ Աիտան, իրեն նման վկայեալ շինարար-նարտարագէտ մը. ունի երկու մանչ գաւակներ. առաջինը՝ բժշկապետ է եւ վերջերս, Առողջապահութեան նախարարի տեղակալի պաշտօնը ստանձնած: Իր կիսն ալ բժշկուհի է եւ ունին երկու աղջիկ գաւակներ: Երկրորդ տղան Լեւոնը՝ դաշնակահար է եւ դասախօս. իր տիկինը՝ նմանապէս, եւ ունին փոքրիկ մանչուկ մը Սերգեյ անունով:

Ջավադեան, հարազատ գաւակն է Երեւանին, հպարտ է մեր մայրաքաղաքով ու կը գուրգուրայ անոր վրայ: Բերած է իր բոլորանուէր մասնակցութիւնը Երեւանի քաղաքաշինութեան, եւ գեղեցիկ հետքերը ձգած է իր ջանքերուն: Եւ հիմա, ինքնաբերաբար յանձն կ'առնէ՝ քաղաքամայր Երեւանի գեղեցկութիւնները ինձի ցոյց տալու հանելի պարտականութիւնը: Այդ գեղեցկութիւններու շարքին է Երեւանի Մեթրոն, որ չկար 1970ին: Ժամերը անցեր են, կը հրաժարիմ թատրոնէն եւ ատոր մօտակայ կայանէն կ'առնեմք Մեթրոն որ կը տպաւորէ զիս իր մաքրութեամբ, ծաւալունութեամբ, գեղարուեստական ճաշակով: Իրարմէ կը բաժնուիմք Հանրապետութիւն Հրապարակի կայանին առջեւ՝ կրկին հանդիպելու խոստումով:

Պանդոկ վերադարձիս, Արմենիա Զ-ի բարապաններէն մին, որ սրտամօտիկ եւ փութկոտ վերաբերում մը ցոյց

կուտայ ինծի, կը ներկայացնէ իր նիւթական անբաղձալի վիճակը ու ինձմէ կը խնդրէ, որ Երեւան գտնուող, Լոնտոնահայ քարերար Վաչէ Մանուկեանին բարեխօսեմ եւ իր գաւակին համար կրթաբոշակ մը ապահովեմ: Կը քացատրեմ որ յիշեալ ազգայինին մտերմութիւնը չեմ վայելեր եւ դժբախտաբար չեմ կրնար ընդառաջ երթալ իր առաքարկին: Կը վշտանայ, կը ջղայնանայ եւ կ'ըսէ. «Հարուստը աղքատի վիճակից չի հասկանայ»: Ցաւ կը զգամ իրեն ակամայ պատճառած ցախս համար: Եթէ միայն գիտնար, որ վերապրողի մը այս գաւակը եւ աղքատութիւնը՝ մտերմութիւնը եղած են երկարատեւ:

Կիրակի 24 Հոկտ. 99

Երեւանի մէջ թիփիֆ Լոնտոնեան առաւօտ մը՝ գորշ երկինքով բայց ոչ անձրեւտ: Արեւը ուշ կը ծագի մեր մայրաքաղաքին վրայ՝ ժամը ութէն վերջ: Կը պատրաստուիմ էջմիածին Ս. Պատարագին ներկայ գտնուելու: Հիւրանոցի մուտքին արժամբնակաւ բարեկամներս՝ Գէորգ Գարամանուկեան եւ Աւետիս Սահակեան, կը հրաւիրեն զիս իրենց միանալ: Ճիշդ մը ճարած են: Կ'անցնինք քանի մը հնամենայ գիւղերու մէջէն՝ որոնք ինծի կ'իպրական տեսարաններ կը յիշեցնեն:

Կը հասնինք Էջմիածին, կը մտնեմ Մայր դուռն եւ դանդաղ քայլերով կը յառաջանամ դէպի Մայր Տաճարը, անցնելով նոր ու հին Գէորգեան Հոգեւոր ճեմարանէն, Մատենադարանէն, գրատունէն եւ ցանկապատուած պարտէզներու առջեւէն: Կանգ կ'առնեմ եւ կը խաչակնքեմ Խրիմեան Հայրիկի, Ներսէս Աշտարկեցիի, Գէորգ Սուրենեանցիի, Վազգէն Վեհափառի դամբաններուն առջեւ եւ կը մտնեմ մեր պապերուն հաւատքին միջնաբերդ՝ Մայր Տաճարէն ներս: Եկած ենք իշման սեղանի սեւ վարագոյրը եւ հայրապետական Աթոռին

վրայ փռուած սեւ ֆողը վերցնելու եւ փարատելու սուգը: Կանուխ է. քացի քանի մը տարեց լուսարարներ եւ մոմավաճառուհիէն՝ ոչ ոք կայ: Տաճարին մարմարեայ յատակը մերկ է եւ միայն մուտքին աջ եւ ձախ կողմը պատին փակած նստարաններ կան: Կը նստիմ աջակողմեան նստարանի անկիւնը մոմի սեղանին մօտ, ուրկէ կրնամ տեսնել խորանին մէկ մասը միայն: Տաճարին կեդրոնի չորս հաստախարիսխ սիւնները, որոնք գմբէթը կը բռնեն, եկեղեցին կը քածմեն քանի մը մասերու եւ կ'արգիլեն հաւատացեալներու միասնականօրէն աղօթելու տրամադրութիւնը: Ճիշտ որոշեալ ժամուն կը սկսի ժամերգութիւնը, որուն կը յաջորդէ Ս. Պատարագի հոգեպարար արարողութիւնը ի ներկայութեան կաթողիկոսական տեղապահին՝ Գեոր. Տ. Ներսէս Ս. Արք. Պօգապալեանի, Ամենապատիւ, Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ արժանաշնորհ հայրերու եւ մասնակցութեամբ հոյակապ երկսեռ երգչախումբի մը, որուն երգեցողութիւնը հոգեկան խորունկ վայելք կը պատճառէ եւ լի ու լի կը գոհացնէ երկար տարիներու կարօտս:

Բակին մէջ կը հանդիպիմ Գէորգեան ճեմարանի քարտուղար եւ ուսումնավար՝ Անդրանիկ Յակոբեանին որ կը հրաւիրէ զիս այցելելու դասարանները, գրադարանը, աշխատանոցները եւ սերտարանը: Այսէ կ'անցնեմ կրթական ուսումնական ծրագիրը եւ դասացոյցը, կը համոզուիմ որ 110 ճեմարանականներ, Հոգ. Տ. Հայկազունի Մ. Վրդ. Նաճարեանի վերահսկողութեան տակ, իր որակաւոր դասախօսներուն շնորհիւ լաւագոյն դաստիարակութիւնը կը ստանան իրենց հոգեւորականի կողմէն պատրաստութեան համար. իրենց գուտ կրօնագիտական զարգացումին առընթեր՝ առնալ կը սորվին հայերէն՝ գրաբար եւ աշխարհաբար, ռուսերէն, անգլերէն, հայ

ծողովուրդի պատմությունը և գրականությունը, Ընդհանուր Ազգաց Պատմություն, հոգեբանություն, իմաստասիրություն և մանկավարժություն: Ճեմարանը, օժտուած է ֆիզիքական, հոգեկան և կրթական լաւագոյն պայմաններով՝ հասցնելու համար իրենց կոչումին գիտակից, զարգացած եկեղեցականներ, որոնց կարիքը կը զգանք ամենուրեք: Այս կարեւոր հաստատությունը արժանի է մեր բոլանդակ սիրոյն ու գուրգուրանքին և մեր բարոյական և նւթական անվերապահ օժանդակութեան:

Դէպի գրատուն նամբուս վրայ, կնոջական երկչոտ ձայն մը ետեւէս ինծի յաջողութիւն և առողջութիւն կը մաղթէ: Մեղրամովէ նիհար դէմքով հագիւ քսանամենի մանկամարդուհի մըն է, որ իր երեխան գրկած ինձմէ օգնութիւն կը խնդրէ: Ամուսինը ծանր հիւանդ է, հիւանդանոցի մէջ գործողութեան կարօտ: Մեր հայրենիքին՝ Շուկայի Տնտեսութեան սկզբունքին յարումին հետեւանքով, Պետութիւնը իր ուսերուն վրայէն թօթափած է ձրի բժշկական դարմանումի և կրթութեան պատասխանատուութիւնները: Սիրտ նմող այս կացութեան առջեւ, ինծի համար, անկարելի է մերժել:

Էջմիածնի մայր ելքին առջեւ, երկու անուշ լեզու կարճուկ մամիկներ ինծի երկար կեանք, առողջութիւն, յաջողութիւն կը մաղթեն: Անոնց ինքնին տարեց մարդ մը, խոպոտ ցած ձայնով, գետին նայելով, կըսէ. «Օգնեցէ խնդրում եմ, երկու օր է սոված եմ»: Կ'օգնեմ և կը մարթեմ որ շուտով կացութիւնը փոխուի և իրենք՝ չհարկադրուին այս միջոցին դիմելու:

Ճիփին մէջ մեզի կը միանան արժանթիմահայ Տէր և Տիկին Գ. և Լ. Պէրպէրեանները, Տէր և Տիկ. Ա. և Լ. Սթանպօլեանները և պատգամաւոր՝ Գ. Նահապետեանը և միասին կ'այցելենք Ս. Գայեանէ եկեղեցին, ուր ներկայ

կ'ըլլանք մատաղօրհնութեան մը և կը ստանանք Աւագբէշցի սրտաբուխ օրհնութիւնները: Յետոյ կ'այցելենք մօտակայ Ս. Հռիփսիմէի եկեղեցին ուր երկու պարմանուհիներու մկրտութեան արարողութիւնը կը կատարուի: Ուշադրութեամբ կը դիտեմ եկեղեցւոյ նարտարապետական կառոյցը, անսիւն՝ և բոլորածեւ պատերու վրայ հանգչող գմբէթը և ուղղահայեաց գլխաւոր գիծը յատկագծին, ու կը մտաբերեմ գեղագէտ ուսուցչիս՝ Շահան Պէրպէրեանի տեսակէտը՝ որ այս եկեղեցին կը նկատէր որպէս հայկական սրբազան նարտարապետութեան ամէնէն յատկանշական և հարազատ կերտումները: Մեր նամբուն վրայ այցելութիւն մը կու տանք Ջուարթնոցի աւերակներուն: Մանօթեմ Թորամանեանի յղացած վերականգնումի մանրակերտին և սակայն, տարօրինակօրէն, հրեշտակներու նուիրուած այս սրբատեղին, իր սիւներու բաց շարայարմով, իմ վրայ հեթանոսական տաճարի և տպաւորութիւնը կը ձգէ:

Երեւան վերադարձին, Արտիսանի վրայ, հանրապետութեան հրապարկին մօտ PIZZADiRoma ճաշարանը կը մտնենք: Սիրուն, մաքուր, լուսաւոր սրահիկ մը, որուն պատերը զարդարուած են հայականաւոր արուեստագէտներու դիմանկարներով, և անյայտ անկիւնէ մը հայկական երաժշտութիւն կը ծորէ մեղմօրէն: Սպիտակ շապիկներով և կարն սեւ փէշով սիրուն օրհորդներ ժպիտով և հաճոյակատարութեամբ կը սպասարկեն: Հայերէն և անգլերէն ճաշացանկը՝ իտալական անուններով կը ներկայացնէ բիձայի տեսակներ, որոնց կարգին՝ հայկական ձնոնբրիցութիւնը հայկական ապուխտն ալ աւելցուցած է:

Սեղանակիցներս պատուական մարդիկ են և հոյակապ հայեր: Գարլոս Պէրպէրեանը, կենցաղագէտ, խանդավառ անձ մըն է որ մաքուր հայերէն կը խօսի:

իր տիկինը՝ Էլիզա, (ծն. Թերզեան) համբաւաւոր, գուարթախօս մասնագէտ բժշկուհի մըն է, որ հայերէն կը հասկնայ բայց արտայայտուելու դժուարութիւն ունի: Արմէն Սթամպոլեան եւ իր տիկինը, Լուսիան (ծն. Կիւլէգեան) թէեւ կորսնցուցած են հայ լեզուի պայքարը, բայց վառ պահած են իրենց խանդավառութիւնը մեր ազգային արժէքներուն հանդէպ: Գէորգ Մանուկեանը, հաւատաւոր հասարակական գործիչ է եւ կրթական մշակ, որ տարիներէ ի վեր մեր Մայր Հայրենիքին հետ սերտ կապեր մշակած է եւ քանիցս արժանօրէնահայ ուսանողներու հայրենիք ուխտագնացութիւնը գլխաւորած: Հայապահպանումի ամուր ժայռ մըն է: Աւետիս Սահակեանը, քաղաքի հոգիով երիտասարդ մը որ իր հայրենասէր ծնողներուն կարգադրութեամբ՝ չորս տարի հայկական վարժարան յաճախած է հայեցի դաստիարակութեան մը բարիքները վայելելու համար: Մօտէն կը հետաքրքրուի Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի հայութեան կեանքով, եւ երբ իր հարցումներուն գոհացում կու տամ, կըսէ. «Լուսահոգի հայրս ալ այդպէս կը մտածէր»: Զիս սկսած է իր հօրեղոր տեղը դնել եւ հոգ տանիլ ինծի: Ամէն օր մօրը կը հեռաձայնէ եւ օրը օրին տեղեկութիւն կու տայ տեղական անցուդարձերուն մասին: Վնաս է իր երեք գաւակները հայ մեծցնել ի գին ամէն գոհողութեան: Կը հաւատամ իր կամքի ուժին: Քանի մը ժամ առաջ, իրարու անձանօք հայերս, Երեւանեան ճաշարանի մը մէջ, իրարու մտերմացած՝ կը խմենք մեր ընտանիքներուն եւ սիրելի բարեկամներուն կենացը, եւ նաեւ մեր հայրենի հարազատներուն, եւ ի սրտէ կը մաղթենք որ շուտով բարօր եւ ուրախ օրեր գան եւ անոնք լիովին վայելեն ազատութեան եւ անկախութեան բարիքները:

Հանրապետութեան հրապարակի մեքորոյի կայանը, կը հանդիպիմ Ս. Զավադեանին եւ միասին կը ճամբորդենք ու կանգ կ'առնենք տասնչորս կայաններէն յատկանշական չորսին վրայ - Զօրավար Անդրանիկ, Սասունցի Դաւիթ, Մարեշալ Բաղրամեան եւ Գարեգին Նժդեհ: Մաքուր, լայն փապուղիներ՝ ամէն մէկը իրեն յատուկ ոճային գեղեցկութեամբ, լուսաւորումով: Նպատակայարմար, մաքուր ելեգանշարժ կառքեր, որոնք օրական մօտ մէկ միլիոն երեւանցիներ կը փոխադրեն: Իւրաքանչիւր ճամբորդութեան համար կը վճարեն 40 դրամ: Կը հիանամ մեքորոն շինողներու ճարտարութեան եւ կամքին, որոնք, փորած են Երեւանի ընդերքը, տաշած եւ յղկած են ժայռերը՝ ստորերկրեայ այդ գեղեցկութիւնը ստեղծելու համար: Հոս ալ հայկական ձեռներիցութիւնը գլուխը կը ցցէ: Տեղ-տեղ կայանի մը մուտքին՝ փապուղիի մէկ կողմին վրայ բուսած են նրբամարմին կրպակներէ կազմուած բանուկ շուկաներ եւ ասիճաններու երկայնքին պազարներ:

Կանգ կ'առնենք Գարեգին Նժդեհի վրայ, որ վերջին կառոյցն է: Սովորականէն աւելի յաջող է ելքի բակը եւ անկէ վեր նշանաւոր հրապարակը, որուն վրայ կանգնած է յեղափոխական հերոս՝ Մանուկեանի արձանը, իր աղբիւրներով եւ կեդրոնէն ճառագայթող լայն ուղիներով: Շատ տպաւորիչ է պարզուած տեսարանը: Ս. Զավադեան որ որպէս շինարար-ճարտարագէտ գլխաւորած է հրապարակին շինութիւնը, կը նկարագրէ սովետական Հայաստանի հիմնադրութեան յիսնամեակի առթիւ ստեղծուած շինարարական խանդավառութիւնը:

Երկուշաբթի 25 Հոկտ. 99

Առտուն, հանրապետութեան հրապարակի վրայ գտնուող ճամակատունը կ'երթամ եւ կնոջս եւ հաւատացեալ

բարեկամի մը խնդրանքին ընդառաջելով էջմիածնի Տաճարին նկարով երկու բացիկներ կը դրկեմ: Կը վճարեմ նամակադրոշմի գինը պաշտօնուհիին, որ գանձնէ կը տեղադրէ իր սեղանին վրայ: Նամակատուի չեմ տեսներ, կը հարցնեմ «Գանի» օրէն կը հասնի Լոնտոն», «12 օրից» կը պատասխանէ անոյ ժպիտով մը: 25 Հոկտեմբերին նամակատուն յանձնած երկու բացիկներս, որոնք խոստացած էին Լոնտոն հասնիլ 12 օրից՝ ցարդ՝ Յ ամիս վերջ տակաւին չեն ստացուած: Կ'երեւի պաշտօնեային սեղանին վրայ մշիկ մշիկ կը ննջեն:

Կ'անցնիմ նախկին հայ Պետիրատի շէնքը, գաղափար մը կազմելու համար հրատարակուող գիրքերու մասին: Նոր միւթեր են եւ գործնապաշտ մօտեցումը ակնեբեւ է: Մեծ մասով դասագիրքեր են - օրէնսգիտութեան, տնտեսագիտութեան, քաղաքագիտութեան, անգլերէն լեզուի եւ ապա, այս բոլորին մէջ կը գտնեմ հատոր մը Զարեցնէն, Վ. Տէրեանէն եւ Հ. Սահակեանէն: Յետոյ կը քալեմ մինչեւ Արովեանի անկիւնը ու կանգ կ'առնեմ գրասենեակի մը առջեւ որ Ընդունարան անունը կը կրէ, եւ խումբ մը մարդիկ խոնուած՝ կը հետեւին վաթսունի շուրջ, միհար ջղուտ մարդու մը բարկանայթ գոռում գոչումին եւ իր ձեռքի սպառնազին շարժումներուն, որոնք ուղղուած են պաշտօնեայի մը որ քաժնուած է ապակիի փեղկով մը: Ներկայ մը, կը բացատրէ ինծի, որ այս վայրը Վարչապետարանի գրասենեակն է որ կը զբաղի՝ քաղաքացիներու գանգատներով: Բողոքարկուն յանկարծ դուրս կու գայ սենեակէն եւ դրան առջեւ կեցողներուն կը հարցնէ թէ ո՞ր է Տիկ. Խաչատուրեանը, որ իր հարցով պիտի զբաղի: Տիկինը չերեւար հակառակ ներսէն իրեն տրուած հաւաստիացումին:

Քիչ մը անդին, Վարչապետարանի

մուտքին առջեւ կը տեսնեմ ոստիկան մը որ կը խօսի տարեց մարդու մը հետ եւ շէնքէն ներս կը մտնէ: Կը մօտենամ մարդուն եւ կը նշմարեմ որ կուրծքէն կախած է խաւաքարտ մը որուն վրայ գրութիւն մը կայ: Կը հարցնեմ թէ ի՞նչ է իր բողոքը: Ճաղատ գլխով, չածիւռած դէմքով, կարմրած աչքերով, միջահասակ, հաստակազմ հայրենակիցս կ'ըսէ թէ իր անունը Մանուկ Սուրէնի Մարգարեան է: Ելած է Մասիս Բաղաճի՝ հարցնելու Վարչապետին թէ ինչո՞ւ չորս ամիսէ ի վեր իր կենսաթոշակը՝ 4000 դրամ (\$8) իրեն չեն տուած, եւ հիմա ալ կ'արգիլեն իրեն Վարչապետին ներկայանալ այս հարցումը հարցնելու համար: Կը հարցնեմ թէ ընտանիք ունի՞. կը յայտնէ թէ ոռու կնոջ մը հետ ամուսնացած է որ իր երեք գաւազները առած եւ անյայտացած է: Դատելով իր արտայայտութենէն եւ վարմունքէն՝ բացայայտ է որ խօսակիցս որոշ զարգացումի տէր, շնորհիվ մարդ մըն է: Կը խնդրեմ իրմէ միասին մօտակայ սրճարան մը երթալ եւ գաւաթ մը սուրճ խմել որ իր յոգնութիւնը առնէ: Տխրութեամբ կը նայի աչքերուս, շնորհակալութիւն կը յայտնէ եւ քաղաքացիութեան կը մերժէ հրաւերս: Մահուան չափ կը տխրիմ: Ինչո՞ւ հայրդի մը որ տարիներ ծառայած է իր հայրենիքին ու հանգստեան կոչուած՝ չորս ամիս կը գրկուի իր շատ համեստ օրապահիկէն: (4000 դրամով կարելի է երկու քիճա եւ երկու շիշ ֆաթաօլա գնել՝ Pizza di Roma-ի մէջ): Ի՞նչ է պատճառը: Արդեօ՞ք ընկերային ապահովութեան նախարարութեան պիտեմէն հատած է. թէ՛ գրասենեակին մէջ շղթային մէկ օղակը խախտած է եւ Մանուկ Մարգարեանին կենսաթոշակը հոն մնացած է:

Ինծի համար հաճոյք է հետիոտն շրջագայիլ քաղաքայր նրեւանի մէջ.

փողոցները վերամկրտուած են եւ հայացած՝ մեր հին եւ նոր մեծութիւններուն անուններով: Ամէն այգի ունի պաշտելի տաղանդաւորի մը արձանը: Կը սկսիմ Հանրապետութեան Հրապարակէն, կը մտնեմ Արովեան փողոց, ձախ կը դառնամ Արամի (Մանուկեան) փողոցի անկիւնէն, կը կտրեմ Կողբացիի փողոցը, աջ կը դառնամ Մեսրոպ Մաշտոցի փողոցի անկիւնը: Կը փախկնամ Թումանեանի փողոցը միւս կողմէն Ազատութեան հրապարակը: Կը կտրեմ Վահան Տէրեանի փողոցը եւ կը մտնեմ Սայաթ-Նովայի Պողոտան: Աջ կը դառնամ Նալպանտեանի փողոցի անկիւնը: Կանցնիմ Սախարովի հրապարակէն եւ կը վերադառնամ Հանրապետութեան հրապարակը: Այնքան, երեւանի ծառուղիները եւ այգիները, բայսծանոյշ գեղեցկութիւն մը ունին սփիւտահայու մը հոգին խռովող: Փողոցները մաքուր են: Կը տեսնեմ մամիկներ, որոնք խանութներու առջեւ մայքերը աւելով եւ աղբաշով կը մաքրեն եւ այդ ձեւով՝ խանութպաններէն համեստ օրապահիկ մը կ'ապահովեն: Հիւրանոց վերադարձիս, Արմենեա 1-ի առջեւ կը տեսնեմ խումբ մը սփիւտահայեր, որոնց մէջ կը զանազանեմ դէմքերը Հ.Բ.Ը.Մ.ի ջոջերէն՝ Պերմ Սեդրակեանի եւ Նազար Նազարեանի, որոնց հետ կ'ողջագոտուիմ: Սեդրակեանը զիս կը ներկայացնէ Երեւանի Հ.Բ.Ը.Մ.ի ներկայացուցիչ՝ Աշոտ Ղազարեանի եւ կ'անդադառնայ Լոնտոնի մէջ՝ քարեգործականէն ներս երկար տարիներու ծառայութեան: Գնահատանքը կը նեղէ զիս, որովհետեւ անկեղծ չէ եւ չեմ կրնար ցաւս չյայտնել՝ վերջին տասնամեակին Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան հայապահպանումի գործին հանդէպ ցոյց տուած անտարբերութեան եւ մասնաճիւղերու գործերուն, իր անտեղի եւ խափանարար միջամտութեան:

Ն. Նազարեան իր հիասթափութիւնը կը յայտնէ սփիւտի երիտասարդութեան հանդէպ եւ կ'ըսէ թէ հակառակ քարեգործականի ջանքերուն՝ կրթաթոշակ ստացողները կ'ուժանան: Սրտցաւ խօսեմքս տղոջուած են՝ Նիւ Նորֆի կեդրոնին, որ իր անհեռատես քաղաքականութեամբ խանգարեց Լոնտոնի մասնաճիւղի եռանդուն գործունէութիւնը: Աշոտ Ղազարեան խօսակցութեան մէջ կը մտնէ եւ կ'ըսէ թէ երիտասարդութիւնը նոր նպատակներ պէտք է հետապնդէ եւ նոր ծրագիրներ մշակէ եւ իր ջանքերը պէտք է հունաւորէ հայրենաշինութեան գործին: Կը փորձեմ քացատրել խօսակցիցիս որ յարգելով հանդերձ հայրենիքին օժանդակելու հրամայականին կարեւորութիւնը, քարեգործականը սփիւտի մէջ կենսական առաքելութիւն մը ունի եւ հայապահպանումի ամէնէն կարեւոր գործօններէն մին է՝ իր ոգիովը, գաղափարականով, կազմակերպութեամբ, նւթական միջոցներով եւ հաւատաւոր անդամակցութեան ջանքերով: Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի ներկայացուցիչը, որ ինծի կը յիշեցնէ հին օրերու մարմար փրփրական տիպիսը՝ փապուղայի մ տեսողութենէ կը տառապի, կը պնդէ իր տեսակէտին վրայ: Դժբախտաբար նոյն ալիքի վրայ չենք: Կը խոստանամ առիթը գտնել երեւանի մօր եւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան ծանօթանալու եւ հետը աւելի երկար խօսելու:

Պ. Սեդրակեան եւ Ն. Նազարեան եկած են յաջողցնելու Գարեգին Արք.ի թեկնածութիւնը եւ կը դրուատեն Սրբազանին քարեմասնութիւնները եւ առաւելութիւնները ու կը թելադրեն որ իրեն ի նպաստ ջուլտարկեմ: Շնորհակալութիւն կը յայտնեմ իրենց տուած տեղեկութիւններուն համար եւ կը յայտնեմ որ որոշած եմ անմախապաշար միտքով կատարել

պատգամաւորի պարտականութիւնս:

Կը մտադրեմ երեկոյեան երաժշտական երեկոյթի մը ներկայ ըլլալ: Օփերայի սրահը փակ է, բայց բովի Արամ Խաչատուրեանի անուան համերգասրահին մէջ համերգ մը կազմակերպուած է մասնակցութեամբ երեւանի Սինֆոնիկ նուագախումբին եւ Յունաստանէն հրաւիրուած երաժիշտներուն: Կանուխ է, եւ մօտակայ՝ *vernissage* այգին կ'երթամ անգամ մը եւս դիտելու Մարտիրոս Սարեանի արձանը: Այգին պարպուած է Շարաթ օրուայ իր գեղարուեստական պերճանքէն եւ գոյներու հանդէսէն: Հոն կը գտնեմ նատրակ խաղացող տարեցներու խումբ մը: Նստարաններուն հորիզոնական տախտակները վերցուած են, եւ որպէս վառելափայտ գործածուելու են՝ 1991-4 ժամերը: Մարդիկ, անոնց պէթոնէ ռոտերուն վրայ կը նստին եւ սեղանի տեղ՝ խաւաքողէ տուփ կը գործածեն: Ամբողջական կեդրոնացումով կը խաղան, աւելի ճիշտ՝ կը ճակատին, այս հանգստեան կոչուած թռչակաւորները, որոնք, լաւ եւ գէշ օրերուն ծառայած են հայրենիքին: Մէկը անուցմէ, զինուորականի կեցուածք եւ ֆայուածք ունի եւ արուեստական սրունքով կը ֆալէ: Անոնք կ'իրքով կը վիճին, կը կատակեն, իրար կը ֆաշշեն եւ կը զուարճանան ու կը մոռնան տրտում եւ քիտ իրականութիւնը ներկային: Պատահմամբ, հոն կը հանդիպիմ տարեց մանկավարժի մը որ Գարեգին Արք.ին տնօրէնը եղած է Էջմիածնի Միջնակարգին մէջ: Կը դրուատէ իր նախկին աշակերտին ուշիմութիւնը, աշխատասիրութիւնը եւ քարեկրթութիւնը ու կը զարմանայ թէ ինչու՞ արտասահմանի հայութիւնը քացասական դիրք մը բռնած է իր սիրեցեալ աշակերտին հանդէպ: Ջիս կ'առաջնորդէ մօտակայ բլուր մը, որուն ստորոտը կը տեսնեմ Թամանեանի

արձանը՝ երեւանի քարտէսին վրայ հակած: Բլուրին երկու կողմերը, սպիտակ քարէ աստիճաններ մինչեւ գագաթը կը տանին. իսկ աստիճանաշարքերու միջեւ միջոցը երեք յարկի վրայ փորուած սրահներու վերածուած է: Բլուրին գագաթէն երեւանի գեղեցիկ համայնապատկերը կը պարզուի: Առաջնորդս ինծի կ'ընկերանայ մինչեւ կարապի լիճը եւ հրաժեշտ կ'առնէ յաջողութիւն մաղթելով:

Կը մօտենամ օփերայի շէնքին առջեւ կանգնած Ալեքսանդր Սպենդիարեանի արձանին: Տիրութիւն, ցաւ եւ զայրոյթ կը յաջորդեն իրարու: Տգէտ, գոեհիկ փողոցայիները պղծք են մեծ երաժիշտին արձանը եւ պատուանդանը անգլիերէն լուսանկերով, որոնցմով անգլիախօս ստահակներ իրենց խօսքերը կը համեմեն: Երբ ցաւս կը յայտնեմ սրահի պահակին՝ գլուխը անզօրօրէն կը շարժէ եւ կ'ըսէ. «Տարբեր ժամանակների մէջ ենք ապրում: Անցեալին ամէն մի արձանի մօտ մի միլիցիա (նստիկան) էր կանգնում»: Ոմանք իրենց ձեռք ձգած ազատութիւնը արտայայտելու տարօրինակ ձեւեր ունին. բայց հայէ մը՝ այս անարգանքը չէի կրնար երեւակայել:

Տրտում սրտով կը մտնեմ ֆիլիպք-մոնիայի սրահէն ներս որուն առջեւ զետեղուած է մուշ գոյն հոյակապ արձանը Արամ Խաչատուրեանին: Քիչ է թիւր ունկնդիրներուն: Հաճելի է նստիլ այս անուանի սրահին մէջ եւ վայելել յունական գեղջկական պարի եղանակներու սրտագրաւ դաշնաւորումը եւ Մոցաւորի համանուագներէն մին:

Երեքշաբթի 26 Հոկտ. 99

Առտուան ժամը 9.15ին, պատգամաւորներս օրօպիւսներով նամբայ կ'ելլենք դէպի Էջմիածին: Ս. Պատարագը կը սկսի ժամը 10.00ին: Պատգամաւորներու համար աթոռներ

գետեղուած են Տաճարին առաջամասին աջ եւ ձախ կողմը: Հաւատացեալներու անընդհատ շարժումը եւ խօսակցութիւնը կը խանգարեն մեր կեդրոնացումը եւ շատ դժուար կ'ըլլայ հետեւիլ պատարագիչին աղօթասացութեան, խորանին վրայ սպասարկող սարկաւազներուն եւ դպրաց դասին հոգեզմայլ երգեցողութեանց: Գովս կեցած, Գեորգ Գարամանուկեան այնքան կը գայթակղի ի տես կարգ մը երիտասարդներու անպատկառ անտարբերութեան, որ կը ստիպուի յանդիմանել զանոնք: Ի հակադրութիւն այդ ապաշնորհ երիտասարդներուն, երեք միջին տարիքի կիներ, Պատարագի ամբողջ տեւողութեան, կեդրոնի սիւներու արանքին, երկրպագութեամբ ճակատին յատակի մարմարին փակցուցած կը հետեւին արարողութեան: Իրենց առհաւակն հաւատքը այս նիւթապաշտ անհաւատ դարուն կը յուզէ զիս: Աղմուկին պատճառով չեմ կրնար ամբողջովին հետեւիլ Պատարագիչ Սրբազանին բարոյքին, որմէ, կարն եւ կուռ աւուր պատշաճի խօսք մը կ'ակնկալէի: Յաւատ Ս. Պատարագի Հոգեհանգստեան Պաշտօն կը կատարուի երանաշնորհ Գարեգին Ա. Կաթողիկոսի դամբանին շուրջ, հանդիսապետութեամբ կաթողիկոսական Տեղապահին եւ մասնակցութեամբ Ամենապատիւ Պատրիարքներուն եւ գերաշնորհ ու հոգեշնորհ եւ արժանաշնորհ հայրերուն, պատգամաւորներուն, եւ հաւատացեալ ժողովուրդի ներկայութեան:

Կէսօրէ ետք, ժամը 2-ին, Վեհարան կը ներկայանա՞մ կատարելու գրանցումի գործողութիւնը եւ ստանալու մեր պատգամաւորի ինքնութեան բառերը: Հակառակ կազմակերպիչ յանձնախումբի Ատենապետ՝ Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի Տաճարի մէջ ըրած յայտարարութեան, պատգամաւորները կը խոնուին

Վեհարանի մուտքի երկու սեղաններուն առջեւ եւ կը ստեղծուի բառսային վիճակ մը ու կը նմանին՝ նպաստընկալ գաղթականներու, որոնք իրար կը հրմշտկեն: Ամերիկահայ տիկիներ, իւրաքանչիւր պատգամաւորի իր ինքնութեան բառից ստացումէն ետք, ազգային-եկեղեցական ժողովի անունը կրող տոպրակ մը կու տան որ կը պարունակէ՝ ա) Ազգային-եկեղեցական ժողովի գրէոյկը, Սրբազաններու եւ պատգամաւորներու անուանացանկը, պատգամաւորներուն երդումը. Բ) Կաթողիկոսական Տեղապահի զեկոյցը. գ) ժողովի ժամանակացոյցը. դ) Էջմիածնի Հանդէսը՝ Գարեգին Ա.ի մասին. ե) Քրիստոնեայ Հայաստանի Հանդէսի եւ ապագայ մշակութային ամսագրի թիւերը. զ) փոքրիկ նօթատետր մը, գրիչ մը եւ երեք բառակուսի խաւաքարտեր՝ ձեռամբարձի բուրակութեան. Կանաչը՝ Այո. կարմիրը՝ Ոչ, եւ ճերմակը՝ ձեռպահ: Բացայայտ է որ Հայաստանեայց եկեղեցւոյ հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի գրասենեակը գնահատելի կազմակերպչական աշխատանք տարած է եւ կրկնապէս ցաւ կը զգամ գրանցումին անյաջող արդիւնքին համար:

Վեհարանէն դէպի մայր դուռ ճամբուս վրայ ուշադրութիւնս կը գրաւեն խումբ մը անուշիկ ձագուկներ, որոնք հաւաքուելու են Վազգէն Վեհափառի դամբանին շուրջ եւ ծաղիկներ կը դնեն: Երեսնեան դպրոցի մը աշակերտներն են, որոնց ուսուցչուհին կը խօսի երանաշնորհ հայրապետին մասին: Կը զմայլիմ. մանկավարժականօրէն սքանչելի պատեհութիւն մը, կաթողիկոսական ընտրութեան նախօրէին՝ խօսելու մեր եկեղեցիին մասին եւ դեռատի հոգիներու մէջ՝ մեր ժողովուրդի մեծ գաւակներուն հանդէպ սիրոյ եւ յարգանքի զգացումը դրոշմելու: Կը

շնորհաւորեմ ուսուցչուհին եւ յաջողութիւն կը մաղթեմ իրեն եւ իր ծագուկներուն:

Խումր մը տարեց էջմիածինցիներ կը մօտենան ինծի եւ կը հարցնեն ուրկէ գալս: Կ'ուզեմ գիտնալ թէ ե՞րբ պիտի ըմտրուի նոր կաթողիկոսը: Կը հետաքրքրուին սփիւռքահայութեան ընդհանրապէս եւ Լոնտոնահայութեան կեանքով: Մօտ կէս ժամ մը՝ հանելի խօսակցութեան մը ընթացքին կը փորձեմ գոհացում տալ իրենց հետաքրքրութիւններուն: Բարի, ազնիւ հոգիներ են, աղը՝ մեր ազգին: Մէկուն ծնողը Վանքի է, միւսինը՝ Ապարանցի, որ կը յայտնէ թէ իր հայրը մասնակցեք է 1918ի Պաշ. Ապարանի ճակատամարտին: Միւսները էջմիածինցի են: Խումրին երէցը կը հարցնէ թէ սփիւռքի հայութիւնը ինչ կը մտածէ մեր հայրենիքին մասին: «Կը մտածէ՞ք մեր մասին»: Կը հասկնա՞մ իր հոգեվիճակը: Կը հաւաստիացնեմ որ սփիւռքահայութիւնը հարազատի զգացումներով կապուած է մեր մայր հայրենիքին եւ հայրենաբնակ հայութեան ու իր համեստ եւ անսակարկ մասնակցութիւնը կը բերէ՝ հայակերտումի նուիրական պարտականութեան:

էջմիածնի գրատան մէջ կը հանդիպիմ Գագիկ Աթաբեկեանին որ ինծի կը նուիրէ իր խմբագրած Մաշտոց կրթամշակութային գիտամանկավարժական հանդէսին Դ. Բիւր՝ Վազգէն Վեհափառի իւղանկարով եւ անոր ծննդեան 90 ամեային նուիրուած: Կը յայտնեմ վախճանեալ Վեհափառին հանդէպ զգացած որդիական սէրս եւ ակնածանքս, որուն ճանչնալու առիթը քանիցս ունեցած եմ տարիներ առաջ՝ Լոնտոնի մէջ: Կ'առաջարկէ որ Վեհափառին մասին յիշատակներս գրեմ եւ Մաշտոցին դրկեմ: Ուրի վրայ մեր խօսակցութեան ընթացքին երբ

կ'անդրադառնամ մեր հայրենիքի ներկայ վիճակին եւ ժողովուրդին կողմէ արտաշայտուած ծանր դժուարութիւններուն, Աթաբեկեան կ'ըսէ. «Ազատութիւնը այնպիսի մի բանկագին պարգեւ է, որի համար արժէ ամէն զոհողութիւն յանձն առնել»:

Երեկոյեան, Երեւանի փոքր ֆիլհարմոնիայի դահլիճին մէջ ներկայ կ'ըլլամ հոգեւոր համերգին ի յիշատակ երանաշնորհ Գարեգին Ա. Հայրապետին: Երեւանի կամերային երգչախումբը դեկավարութեամբ Յարութիւն Թօփիկեանի, մեզի կը հրամցնէ սրտառու յայտագիր մը երեք մասերէ բաղկացեալ: Առաջին մասը կը բաղկանայ Կոմիտաս Վարդապետի հոգեւոր երգերէն՝ Հայր Մեր, Սուրբ Աստուած, Ով Զարմանալի, Այսօր Զայնն Հայրական, էջ Միածինն ի Հօրէ, Խորհուրդ Խորին, Տէր Ողորմեա, Աշխարհ Ամենայն: Երկրորդ մասին մէջ, երգչախումբը կ'երգէ Կոմիտաս Վարդապետի ժողովրդային խմբերգներէն փունջ մը. Ինչո՞ւ Պիւնկէօլը մտաւ, Սուսան Սմբուլ, Զինար Նս, Փափուրի, Կայնել Նս Կանչում էլ Զնս, Կուժն Առա, Սանցերգ (Ձաւարծեծ), եւ Բամբ Որոտան երգերը: Երրորդ մասը յատկացուած է Կոմիտաս Վարդապետի արժանաւոր աշակերտներէն Բարսեղ Կանաչեանի յօրինումներէն - Դալիս, Սօսին, Մարալօ, Օրօր եւ Նանօր խմբերգներուն:

Երգչախումբի 24 երկսեռ անդամներու այս հոյակապ ելոյթը զիս կը ներգրաւէ իր գեղարուեստական քարձր որակով եւ կը վերածուի անխառն վայելքի:

Հիւրանոց վերադարձիս, կ'ուսումնասիրեմ Վաչէ Սրբազանին տուած նուէրները եւ կը կարդամ Կաթ. Տեղապահին խմամբով պատրաստած գեկոյցը:

(շարունակելի)

ԿԱՐՊԻՍ ՆԱԱՅԵՆՆ